

չած մնացին երբոր տեսան Վրոլմպոսին բերած վայրենի մարդիկն ու Մերիկայի պտուղներն ու ոսկին : Հատ մեծ պատուով ընդունեցան Վրոլմպոսը, ու զինքը մեծ ծովակալ ու նոր աշխարհքին փոխարքայ անուանեցին : Ենքն ալ տասներեօթը նաւով նորէն ճամբայ ելաւ, ու գտաւ ուրիշ նոր կղզիներ :

Վրոլմպոս երբորդ անգամ մըն ալ ըրաւ նոյն ճամբորդութիւնը, ու նոր նոր տեղուանք գտաւ . բայց չարսիօս մարդիկ այնչափ ամբաստանութիւններ ըրին վրան որ այսպիսի բարերար մարդը երկու անգամ բանտ դրուեցաւ Սպանիա, ու երկրորդին բանտի մէջ թշուառութեամբ մեռաւ :

Իս երկու օգտակար գիւտերէն ետքը՝ որ բոլոր աշխարհքիս երեսը փոխեցին ու մարդուս վիճակն աղէկացուցին, աս դարուս մէջ մէկ քանի պզտիկ գիւտեր ալ եղան :

Դժամանդ՝ բանելուն արհեստը աս դարէս ետքը յաճախեց . ի ուղովիկոս Պերքէմ 1450^{ին} Պրուժ քաղաքը փորձ մը ըրաւ, որ երբոր երկու գոհար իւրարու հետ շփուին՝ մէկը մէկ կը մաշեցնեն . ժողովեց ասոնց մանրութիւնը, ու անով և իր հնարած երկրթէ անիւններուն վրայ դնելով կըցաւ մաքրել ու կտրել ադամանդը¹ :

Կղզիոս Պրիակ անունով մէկը շատ ետքը գտաւ ադամանդին վրայ բան փորագրելու գիւտը :

Սաճառներուն թագաւորը 1457^{ին} փառաւոր կառք մը ընծայ խաւրեց Վաղղիոյ թագուհիին, որուն վրայ շատ զարմացան Վաղղիացիք . վասն զի ինչուան ան ատեն կառքի գործածութիւն չկար կ'ըսեն Վաղղիա . ետքը կամաց կամաց այնչափ շատցան որ ձէ դարուն մէջ տեղուանքը Փարիզու մէջ 300 կամ 400 կառք կար . իսկ հիմա 20,000^{ին} աւելի կը համրուի, առանց վարձուոր կառքերը մէկտեղ սեւ պելու :

Վաղղիոյ ի ուղովիկոս ձաւ թագաւորը իր տերութեւ մէջ իջեաններ՝ հաստատեց՝ ճամբուն վրայ ձիեր փոխելու համար . աս իջեանները միայն թագաւորական թղթատարներու կը գործածուէին, ատեն անցնելով աւելի կատարելագործուեցան :

Տասներհինգերորդ դարուն մէջ տեղուանքը հաստատուեցաւ Խտալիա առջի Վրաւատեղի² ըսուած տեղը, որուն սկիզբը ասանկ եղաւ : Խտալիայի Փերուճիա քաղքին մէկ քանի ազնուականները հասարակ ժողովըրդէան խեղճութեանը վրայ գլխավոր (որ վաշխառուներուն բռնութենէն շատ նեղութիւն կը քաշէին), շատ մը ստակ ժողովեցին՝ որ ժողովրդէան օգնեն : Ով որ ստրկի կարօտութիւն ունէր՝ հոն կ'երթար ու փոխ ստակ կ'առնէր, բայց ապահովութեան համար գրաւ մը կը թողուր : Իսկ անոնք որ խիստ շատ ստակ փոխ կ'առնէին, չափաւոր բան մը կուտային եղած ծախքին համար : Սմանք կը զուրցեն թէ 1515^{ին} Էւոն ձապար եղաւ առջինն որ կոնդակով հաստատեց առջի գրաւատեղին . բայց ան կոնդակին մէջ ալ կը յիշուի թէ նախ Պօղոս Բ պապը հաստատեց է :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս ԷՆԱՅԻ ՊՈՐԷ ԿԱՐՈՒՄ ԵՔԵՂԵՅԻՆ :

Ս ԵՆԱՅԻ եկեղեցիներուն մէջ սրբոյն Ստեփանոսի³ եկեղեցիէն ետեւ հռչակաւորը սրբոյն Կարոլոսի Պորրոմէոսի եկեղեցին է . ասիկայ շատ փառաւոր շէնք է, թէպէտ և անցեալ դարուն իտալական ճարտարապետութեանը պակասութիւններէն ազատ


1 Էլմա :

2 Տես հատ . Ա . եր . 23 :

1 Մէլիէլանէ : Խտ . Posta.

2 Խտ . Monte di pietà.

3 Տես հատ . Բ . եր . 314 :



Վ Էննայի սուրբ Վարդուս եկեղեցին :

Է : Վարդուս 2 կայսրը 1713^{ին} մեծ ժանտախտէ մը ազատելուն յիշատակ՝ աս եկեղեցին շինեւ տուեր է , ու ճարտարապետն եղեր է Յովհաննէս Բերնարդուս Ֆիշեր անուանի գերմանացին :

Վեղեցւոյն մեծ դուռը տասնըմէկ ոտք բարձրութեամբ սանդուխով կը մտցուի , ու վեց հատ կորնթեան սիւներով զարդարած է . աս դրան վրայ է եկեղեցւոյն փառաւոր ճակատը . իսկ եկեղեցւոյն երկու քովերը մէյմէկ հատ քարէ սիւներ կան բարձր , որոնց դրսի կողմը սրբոյն Վարդուսի վարձն ու մահը և ըրած հրաշքները փորուած են . վերի ծայրերը զանգակ դրած է ,

զանգակին չորս կողմն ալ թւերնին բացած պղնձէ արծիւներ : Վեղեցւոյն վրայ ութանկիւնի լուսաւոր գմբէթ մը կայ . իսկ աւագ խորանին վրայ եղած մարմարին արձանը՝ որ սրբոյն Վարդուսի երկինք վերանալն է , շատ սիրուն ու բնական փորուածք է : Վէ որ աս եկեղեցւոյն ճարտարապետութիւնը պակասաւոր չըլլար , աշխարհքիս գեղեցիկ եկեղեցիներէն մէկը կըրնար սեպուիլ :

